

ՌՈՒԶԱՆՆԱ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր
 ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ
aristakesyanr@yahoo.com

+37493961696
 0000-0002-2748-0249

DOI: 10.54503/1829-0116-2022.2-123

ՄՈՌԱՑՎԱԾ ՄԻ ԷՋ ԵՂ.ԶԱՐԵՆՑԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՑ*

Բանալի բառեր – Եղ. Չարենց, «Նամակ խմբագրության», Ա. Վշտունի, ստեղծագործական տարածայնություններ, Խորհրդային Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիա, «Նոյեմբեր» միություն, «Գրական դիրքերում» ամսագիր, պրոլետգրողների անդրկովկասյան առաջին համագումար

«Խորհրդային Հայաստան» թերթի 1928 թ. հունվարի 28-ի (թիվ 23) համարում տեղ է գտել Չարենցի մի նամակ, որը դուրս է մնացել ուսումնասիրողների տեսադաշտից: Այն մի դրվագ է Չարենց-Վշտունի հակամարտության պատմությունից, որի արմատները խորանում են մինչև «Երեքի դեկլարացիա»-ի շրջան՝ մինչև 1922-ի հունիս-հուլիս ամիսներ, երբ աղմկոտ շեփորահանդեսներից, գրական սուր բանավեճերից, դասախոսություններից, երեկոյաններից, բյուլետենների հրապարակումից հետո «Երեք»-ի գրական խմբակը պառակտվում է: Պառակտման պատճառը անդամների (Չարենց, Աբով, Վշտունի) անձնական և գրական-ստեղծագործական տարածայնություններն էին, ինչի մասին վկայում են նաև հուշագիրները (տե՛ս Աբով. «Մի քանի համառոտ դրվագներ Չարենցի վերաբերյալ իմ հուշերից» («Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին...», Ե., 1961, էջ 127), Ալազան. «Հուշեր», Ե., 1967, էջ 36, Նոյեմբ. «Հուշեր և արձագանքներ», Ե., 1968, էջ 96): Չարենցը և Աբովը մեկնում են Մոսկվա՝ սովորելու, Վշտունին Երևանում հիմնադրում է պրոլետգրողների «Մուրճ» ամսագիրը, ապա նաև՝ Հայաստանի պրոլետարական գրողների միությունը և սկսում սուր, անգիջում պայքար Չարենցի դեմ:

Չարենցի և Վշտունու միջև տարածայնությունները խորանում են 1925-ին՝ պրոլետգրողների ասոցիացիայի և «Նոյեմբեր» գրական միության միջև ծայր առած թեժ և անգիջում պայքարի ընթացքում: Մի կողմում գրական գոր-

* Ընդունվել է տպագրության 02.12.2022 թ.:

ծի կազմակերպման կոշտ, աննահանջ վարչարարության կողմնակիցներն էին, պրոլետգրականության հեգեմոնիայի, գրական սխեմատիզմի ուղղափառ հետևորդները (Հ. Հակոբյան, Վշտունի, Ալազան, Ն. Չարյան և ուրիշներ), մյուս կողմում ազգային դեմք ու դիմագիծ ունեցող, ստեղծագործական ազատ մտքի ջատագով գրական ուժերը (Չարենց, Մահարի, Արմեն, Բակունց և ուրիշներ):

Գրական երկու ուժերի միջև պայքարն ստանում է նոր թափ «Գրական դիրքերում» ամսագրի հրատարակությունից հետո (1-ին համարը լույս է տեսել 1927-ի օգոստոսին): Ամսագրի 1927-ի չորս համարներում մեկը մյուսի հետևից տպագրվում են քննադատական հոդվածներ Չարենցի, Մահարու, Բակունցի, Նրանց գնահատող Սուրխաթյանի դեմ:

Գրական այս անառողջ մթնոլորտում Չարենցը հանդես է գալիս Բաքվի «Կոմունիստ» թերթի խմբագրությանն ուղղված ««Օբյեկտիվ քննադատության» մասին (Նամակ խմբագրության)» վերտառությամբ Նամակով՝ մի կողմից ներկայացնելով գրական կյանքում խմբակային պայքարի քայքայիչ ներգործությունը, մյուս կողմից իրավացիորեն հնչեցնելով օբյեկտիվ և անաչառ գրաքննադատության անհրաժեշտությունը:

Չարենցի դժգոհություններին պատասխան Նամակով արձագանքում է Վշտունին (տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1928, թիվ 6, 8 հունվարի):

Բանավեճին միջամտում է Հայաստանի պրոլետգրողների միության կենտրոնական վարչությունը՝ «Առասպել և իրականություն...» վերտառությամբ բաց Նամակ հղելով «Խորհրդային Հայաստան»-ի խմբագրությանը և համառ հետևողականությամբ շարունակելով պրոլետգրողների հովանավորչությունը (տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1928, թիվ 7, 10 հունվարի):

Չարենցն ստիպված է լինում «Հարկադրված պատասխան»-ով մեկ անգամ ևս հերքել իր դեմ ուղղված մեղադրանքներն ու չարախոսությունները (տե՛ս «Պրոլետար», 1928, թիվ 10, 13 հունվարի):

Ահա այս պատասխանին է օրեր անց հաջորդում ուսումնասիրողների աչքից վրիպած հետևյալ Նամակը. «Սրանով հայտնում եմ, որ ընկ. Ազատ Վշտունուն «Պրոլետար»-ի N 10-ում տված իմ պատասխան Նամակի մի շարք խիստ արտահայտությունները հետևանք են եղել մեր միջև եղած պոլեմիքայի սուր բնույթի: Առանձնապես անհրաժեշտ եմ համարում շեշտել, որ այդ պատասխանը գրելիս ինձ հայտնի չեն եղել ընկ. Վշտունու նույն թվականին կատարած մի շարք դրական աշխատանքները որբանոցում, որի հետևանքով իմ պատասխանում բերված փաստերի գնահատականը կրել է միակողմանի բացասական բնույթ:

Ե. ՉԱՐԵՆՑ

1928, 27 հունվարի

Երևան

Խնդրում եմ «Պրոլետար»-ին արտատպել»:

Չարենցն այս նամակով ուղղակիորեն արձագանքում է 1928-ի հունվարի 19-24-ը թիֆլիսում կայացած պրոլետգրողների անդրկովկասյան առաջին համագումարի ընդունած բանաձևի պահանջներին: «Հայ պրոլետգրողների տարածայնությունները վերացած» վերտառությամբ այս փաստաթուղթն ուղղված էր խմբակայնության, անհանդուրժողականության, կոմսոսպարծության դրսևորումների դեմ և միտված վերացնելու հայ պրոլետգրողների միջև խորացող տարածայնությունները (տե՛ս «Խորհրդային Հայաստան», թիվ 23, 28 հունվարի):

Չարենցի նամակը, ինչպես ձևակերպված է բանաձևում, «ավելորդ խստությունները» մեղմելու նպատակ էր հետապնդում: Բանաձև մի կարճ ընթացք հանդարտեցնում է գրական թեժացած մթնոլորտը, սակայն 1928-ի երկրորդ կեսից «Գրական դիրքերում» ամսագրի էջերում պրոլետգրողները վերսկսում են իրենց հարձակումներն առավել կատաղի թափով:

Պրոլետգրողների կողմից «անձնական խժեժանքի» վերածված բանակռիվը տասնամյակի վերջին տեղափոխվում է քաղաքական-գաղափարախոսական պայքարի հարթություն, գրականությունը և քննադատական միտքը թևակոխում են բոլշևիկացման փուլ, իսկ գրական-ստեղծագործական խնդիրները՝ փոխարինվում բանվոր-հարվածայիններին պրոլետգրականության մեջ ներգրավելու դատարկ կոչերով ու պահանջներով:

Չարենցն ու չարենցականները դուրս են մղվում գրական ասպարեզից, և պրոլետասոցիալականները դառնում են այս նոր քաղաքականության առաջամարտիկները, որոնք, շեղելով գրականությունը բնականոն զարգացման հունից, իրենց պրոլետարական և աշուղական ցածրորակ գործերով ուղղորդում են այն դեպի ապագային և հակագրական որոնումների ընթացք:

RUZANNA ARISTAKESYAN

Doctor of Philology

Institute of Literature after M. Abeghyan NAS RA

A FORGOTTEN PAGE FROM THE LITERARY LEGACY OF YEGHISHE CHARENTS

Keywords: Yeghishe Charents, “A letter to the editorial office”, A. Vshtuni, creative disagreements, Association of Proletarian Writers of Armenia, “November” Union, “In Literary Positions” Journal, the Transcaucasian first congress of proletarian writers

A letter by Yeghishe Charents can be found in the newspaper “Soviet Armenia” released on 28 January 1928 (issue 23), which has been left out of the sight of

researchers. It is an episode from the conflict between Charents and Vshtuni, which roots deeply into the period of "The Declaration of Three", until the months of June-July of 1922, when after the noisy presentations, heated literary debates, lectures, parties, newsletter publications, the literary group of "TheThree" disunited. The main reason for the disunion was the interpersonal and literary-creative disagreements among the members of the group (Charents, Abov and Vshtuni). Charents and Abov left for Moscow for studies, Vshtuni founded the proletarian writers' journal "Murch" ("Hammer") in Yerevan, later the proletarian writers' association, and started a sharp, uncompromising struggle against Charents.

The disagreements between Charents and Vshtuni became even worse during the heated struggle between the proletarian writers' association and the "November" literary union in 1925. On one side were the supporters of the rigid, unyielding administration of the organization of literary work, the loyal followers of the hegemony of proletarian literature, and the literary schematism (H. Hakobyan, Vshtuni, Alazan, N. Zaryan, et al.), on the other side the literary forces with a national face and national features, supporters of creative free thought (Charents, Armen, Bakunts, et al).

After the publication of the journal "In the Literary Positions" (the first issue was released in August 1927), the struggle between the two literary opposing forces increased. In 1927 four issues of the journal critical essays were published one after another against Charents, Mahari, Bakunts, and Surkhatyan who supported the three.

In this unhealthy literary atmosphere, Charents addressed a letter titled "About 'Objective Criticism' (A letter to the Editorial Office)" to the editorial office of Baku "Communist" Journal, pointing out on the one hand the corrosive impact of group struggle on the literary life, on the other hand, rightly speaking out the need for objective and impartial literary criticism (see: "Communist", 1928, issue 3, January 4).

Vshtuni responds to Charents' complaints with a letter (see: "Soviet Armenia", 1928, issue 6, January 8). The central administration of the union of proletarian writers of Armenia intervened in the debate by sending an open letter to the editors of "Soviet Armenia" with the caption "Myth and Reality" and persistently continuing the patronage of the proletarian writers (see: "Soviet Armenia", 1928, issue 7, January 10).

Charents is forced to deny the accusations and slanders directed against him once again by "Forced answer" (see: "Proletarian", 1928, issue 10, January 13).

This answer is followed a few days later by the following letter from Charents,

which escaped the eyes of the researchers: "I hereby inform you that a number of harsh expressions in my reply letter to Comrade Azat Vshtunu in issue 10 of "Proletar" were the result of the sharp nature of the polemic between us. I consider it particularly necessary to emphasize that while writing that answer, I was not aware of a number of positive works done by Comrade Vshtuni in the orphanage in the same year, as a result of which the evaluation of the facts presented in my answer had a one-sided negative character.

Y. Charents

January 27, 1928

Yerevan

I am requesting the printing from "Proletar"."

With this letter, Charents directly responds to the demands of the resolution adopted by the first Transcaucasian congress of proletarian writers held in Tbilisi on January 19-24, 1928. The resolution entitled "Armenian proletarian writers' disagreements have been eliminated" was directed against the manifestations of factionalism, intolerance, and tyranny and was aimed at eliminating the deepening disagreements among Armenian proletarian writers (see: "Soviet Armenia", 1928, issue 23, January 28).

Charents' letter, as formulated in the resolution, was aimed at mitigating "unnecessary strictures". The resolution calmed down the heated literary atmosphere for a short time, but from the second half of 1928, in the pages of the magazine "In Literary Positions", the proletarian writers resumed their attacks with more aggression.

At the end of the decade, the debate that was turned into personal revenge by the proletarian writers moved into the domain of political-ideological struggle, literature and critical thought entered the stage of bolshevization, and literary-creative problems were replaced by empty calls and demands to involve the worker-strikers in proletarian literature. The political processing of literature led to new persecutions and later to bloody reprisals organized against Charents and his supporters.

Charents and his supporters were pushed out of the literary scene, and the members of the proletarian associations became the pioneers of this new policy, who, deviating literature from the course of normal development, directed it to the course of anti-national and anti-literary searches with their low-quality proletarian and gang works.

ЗАБЫТАЯ СТРАНИЦА ИЗ ЛИТЕРАТУРНОГО НАСЛЕДИЯ Е. ЧАРЕНЦА

Ключевые слова – Е. Чаренц, «Письмо редакции», А. Вштуни, литературные разногласия, ассоциация пролетарских писателей Советской Армении, союз «Ноябрь», журнал «На литературном посту», первый закавказский съезд пролетарских писателей.

В газете «Советская Армения» в номере от 28-ого января 1928-ого года (номер 23) своё место нашло письмо Чаренца, которое осталось вне поля наблюдения исследователей. Это – отрывок из истории противостояния Чаренц-Вштуни, чьи корни углубляются до периода «Декларации трёх», до июня – июля 1922-ого года, когда, после шумных труботоржеств, литературных острых дискуссий, лекций, вечеринок, публикации бюллетеней, литературная группа «Трёх» распалась. Причиной распада стали личные и литературно-творческие разногласия членов (Чаренц, Абов, Вштуни). Чаренц и Абов отправляются в Москву для обучения, а Вштуни становится основателем журнала пролетарских писателей «Мурч» («Молот»), а также основателем союза пролетарских писателей и начинает бескомпромиссную борьбу против Чаренца.

Разногласия между Чаренцом и Вштуни углубляются в 1925-ом году, в период острой борьбы, возникшей между ассоциацией пролетарских писателей и литературным союзом «Ноябрь». С одной стороны были сторонники жёсткой административной организации литературного дела, православные сторонники пролетарской литературы и литературного схематизма (А. Акопян, Вштуни, Алазан, Н. Зарьян и другие), а с другой стороны – литературные силы, которые имели национальное лицо и черты, пропагандирующие свободную творческую мысль (Чаренц, Маари, Армен, Бакунц и другие).

Борьба между двумя литературными силами получила новый импульс после издания журнала «На литературном посту» (первый номер вышел в свет в августе 1927-ого года). В четырёх номерах журнала 1927-ого года друг за другом печатаются критикующие статьи о Чаренце, Маари, Бакунце, а также о Сурхатяне, высоко оценившем последних.

В этой нездоровой литературной атмосфере Чаренц фигурирует

заглавным письмом «Об «объективной критике» (Письмо редакции)», направленном на редактирование бакинской газеты «Коммунист», представляя, с одной стороны, разрушительное воздействие групповой борьбы в литературной жизни, а с другой стороны – справедливо высказываясь о необходимости объективной и беспристрастной литературной критики (газета «Коммунист», 1928, 4 январь, номер 3).

На недовольствия Чаренца ответным письмом реагирует Вштуни (газета «Советская Армения», 1928, 8 январь, номер 6). В конфликт вмешивается центральная администрация союза пролетарских писателей Армении под заголовком «Миф и реальность...», адресуя открытое письмо редакции «Советская Армения», и настойчивой последовательностью продолжая покровительство пролетарских писателей (газета «Советская Армения», 1928, 10 январь, номер 7).

Чаренц был принуждён ещё раз опровергнуть «Принуждённым ответом» все обвинения и злоречия в свою сторону (газета «Пролетарий», 1928, 13 январь, номер 10).

Именно этому ответу несколько дней спустя следует следующее письмо Чаренца, ускользнувшее с поля зрения исследователей: «Этим письмом сообщаю, что ряд жёстких высказываний моего ответного письма Азату Вштуни в 10-ом номере газеты «Пролетарий были следствием полемики острого характера между нами. В особенности, считаю необходимым акцентировать то, что, при написании данного ответа, мне не было известно о ряде положительных работ в детдоме, выполненных Азатом Вштуни в том же году, вследствие чего оценка приведённых фактов в моём ответе носила односторонний отрицательный характер.

Е. ЧАРЕНЦ

1928 г., 27 января

Прошу «Пролетарий» перепечатать».

Чаренц этим письмом прямым образом реагирует на требования резолюции, принятой со стороны первого закавказского съезда пролетарских писателей, который состоялся в Тбилиси, в 1928-ом году, с 19 по 24 января. Под заголовком «Устранение разногласий пролетарских писателей» эта резолюция была направлена против проявлений групповщины, комчанства и также была направлена на устранение усугубляющихся разногласий между пролетарскими писателями (газета «Советская Армения», 1928, 28 январь, номер 23).

Письмо Чаренца, как и было заключено в данной резолюции, преследовало цель смягчения «лишней строгости». Резолюция в один

краткий период успокаивает накалённую литературную атмосферу, однако со второй половины 1928-ого года на страницах журнала «На литературном посту» пролетарские писатели возобновляют свои нападения ещё более агрессивным образом.

Литературная дискуссия со стороны пролетарских писателей в конце десятилетия перемещается на плоскость политико-идеологической борьбы, литературная и критическая мысль вступает в этап большевизации, а творческие проблемы заменяются пустыми призывами и требованиями привлечь в пролетарскую литературу рабочих-ударников.

Политизация литературы приводит к новым организованным гонениям против Чаренца и его сторонников, а затем и к кровавым расправам.

Чаренц и его сторонники были вытеснены из литературной сферы, и пролетарские писатели становятся передовиками этой новой политики, которые, выбивая литературу из русла естественного развития, своими пролетарскими и ашугскими низкокачественными работами направляют её в русло антинациональных и противолитературных поисков.

«Խորհրդային Հայաստան» թերթի 1928 թ. հունվարի 28-ի (թիվ 23) համարում տեղ է գտել Չարենցի մի նամակ, որը դուրս է մնացել ուսումնասիրողների տեսադաշտից: Այն մի դրվագ է Չարենց-Վշտունի հակամարտության պատմությունից, որի արմատները խորանում են մինչև «Երեքի դեկլարացիա»-ի շրջան՝ մինչև 1922-ի հունիս-հուլիս ամիսներ, երբ աղվկոտ շեփորահանդեսներից, գրական սուր բանավեճերից, դասախոսություններից, երեկոյթներից, բյուլետեններից հրապարակումից հետո «Երեք»-ի գրական խմբակը պառակտվում է: Պառակտման պատճառը անդամների (Չարենց, Աբով, Վշտունի) անձնական և գրական-ստեղծագործական տարաձայնություններն էին, ինչի մասին վկայում են նաև հուշագիրները (տե՛ս Աբով. «Մի քանի համառոտ դրվագներ Չարենցի վերաբերյալ իմ հուշերից» («Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին...», Ե., 1961, էջ 127), Ալազան. «Հուշեր», Ե., 1967, էջ 36, Նորենց. «Հուշեր և արձագանքներ», Ե., 1968, էջ 96): Չարենցը և Աբովը մեկնում են Մոսկվա՝ սովորելու, Վշտունին Երևանում հիմնադրում է պրոլետգրողների «Մուրճ» ամսագիրը, ապա նաև՝ Հայաստանի պրոլետարական գրողների միությունը և սկսում սուր, անզիջում պայքար Չարենցի դեմ: «Մուրճ»-ի 1923-ի 3-րդ համարում (հունվար) Վշտունին՝ Վիգ և Դարբին ծածկանուններով, քննադատության է ենթարկում Չարենցի «Ռոմանս անսեր»-ը և «Պոեզոգությունա»-ն (տե՛ս «Հեղափո-

խոսքի երգիչը բուրժուական հոգեբանությամբ...», էջ 21-23, ««Պոլե-
զոգություն» Եղիշե Չարենցի...», էջ 23-24, տե՛ս նաև «Գրական վավե-
րագրեր» (1920-1930-ական թվականներ), Ե., 2020, հ. 1, էջ 139-141),
իսկ հունվարի 22-ին Նրա ղեկավարած պրոլետգրողների միությունը
կազմակերպում է գրական հավաքույթ և ընդունում հատուկ բանաձև
Չարենցի «Ռոմանս անսեր»-ի դեմ (տե՛ս «Խորհրդային Հայաստան»,
1923, թիվ 15, 24 հունվարի): Վշտունին ընթերցում է Չարենցի գործը,
որից հետո տեղի է ունենում մտքերի փոխանակություն: Հավաքույթի
մասնակիցները քննադատության են ենթարկում «գրվածքի հակահե-
ղափոխական և գերազանցորեն բուրժուական ոգին, ուր կինն այն-
քան ստորացած է հանդես գալիս և լոկ կրքերի հաճույքի առարկա, որ
նա կորցնում է որևէ այլ մարդկային արժանիք, իսկ այդ ամենն այնքան
վուզպար, գռեհիկ արտահայտությունների և ձևերի մեջ, որ ընթերցողի
մեջ առաջ է բերում միմիայն տհաճություն և ցավ...» (տե՛ս «Խորհրդա-
յին Հայաստան», 1923, թիվ 15, 24 հունվարի):

Չարենցի և Վշտունու միջև տարածայնությունները խորանում
են 1925-ին՝ պրոլետգրողների ասոցիացիայի և «Նոյեմբեր» գրական
միության միջև ծայր առած թեժ և անզիջում պայքարի ընթացքում: Մի
կողմում գրական գործի կազմակերպման կոշտ, անսահման վարչա-
րարության կողմնակիցներն էին, պրոլետգրականության հեգեմոնիա-
յի, գրական սխեմատիզմի ուղղափառ հետևորդները (Հ. Հակոբյան,
Վշտունի, Ավագան, Ն. Չարյան և ուրիշներ), մյուս կողմում ազգային
դեմք ու դիմագիծ ունեցող, ստեղծագործական ազատ մտքի ջատա-
գով գրական ուժերը (Չարենց, Մահարի, Արմեն, Բակունց և ուրիշ-
ներ): Ս. Երզնկյանի դիպուկ ձևակերպմամբ՝ սա, ըստ էության, գրա-
կան երկու հակամարտ թևերի՝ «չարենցիզմի» և «գրական ռեակցիա-
յի» («հակաչարենցիզմի») միջև մղվող պայքար էր, որ ներկայացնում
էր պրոլետգրականության զարգացման վերաբերյալ արմատապես
տարբեր պատկերացումներ ու մոտեցումներ: Երզնկյանի համակրան-
քը Չարենցի կողմն էր, և պրոլետգրականության հեռանկարները նա
կապում էր Չարենցի ստեղծագործական որոնումների հետ՝ այն դի-
տարկելով որպես պրոլետգրականության զարգացման ճշմարիտ ճա-
նապարհ (տե՛ս Ե. Սուրեն. «Չարենցի՞, թե՞ գրական ռեակցիայի հետ»,
«Կոմունիստ», Բաքու, 1925, թիվ 47, 1 մարտի):

1926-ի դեկտեմբերի 21-23-ը տեղի ունեցած պրոլետգրողների ասո-
ցիացիայի և «Նոյեմբեր» միության միացյալ կոնֆերանսում փորձ է ար-

վում միավորելու գրական ներհակ ուժերը, սակայն այդ փորձը պրոլետգրողների կողմից ոչ այնքան տարածաշրջանները հարթելուն, որքան կուսակցական պահանջը կատարելուն և «վորոնսկիական» անհանդուրժողականության պիտակավորումից ձերբազատվելուն էր միտված: Ձևավորվում է խորհրդային Հայաստանի պրոլետարական գրողների միություն, ընտրվում է վարչության կազմ (անդամներ՝ Գյուլիքեխյան, Աբով, Ալազան. Ստ. Մանուկյան, Ն. Չարյան, Ան. Վարդանյան, Արմեն, թեկնածուներ՝ Մահարի, Արաքս): Չարենցի անունը չկա անգամ թեկնածուների կազմում, ինչը մեկ անգամ ևս վկայում է հեղծուցիչ այն մթնոլորտի մասին, որում ապրում և ստեղծագործում էր բանաստեղծը: Նորաստեղծ ԽՀՊԳՄ-ն արհեստածին կառույց էր, որի ղեկավար կազմն ամենևին էլ նպատակ չուներ համախմբելու գրական պառակտված ուժերը, ավելին՝ նոր լծակներով և առավել լայն հնարավորություններով պրոլետգրողները շարունակում են իրենց դավերն ու խարդավանքները նյութել Չարենցի և նրա համախոհների դեմ: «Երկու առևտրականներ,- հեգնում է Մահարին,- երբ միանում են և մի գործ սկսում, որպես բարեմադրություն ասում են.- գործին հաջողություն. երբ ընկեր Սուրենը և ընկերուհի Աշխենը միանում են, ասում են.- «մի բարձի վրա ծերանաք». բայց որովհետև տվյալ դեպքում երկու միություններ են, որ կմիանան, այն էլ գրողների և մանավանդ պրոլետ գրողների, մենք չգիտենք ինչ ասենք, որպեսզի մանավանդ պրոլետարական դուրս գա:

- Մի տրակտորի վրա ծերանաք, ու~վ Հայաստանի պրոլետարական գրողներ...» (տե՛ս «Երկու պրոլետ-գրողական միությունների միությունը» քննադատական ֆելիետոնը, «Կարմիր մոծակ», 1927, թիվ 1, հունվար, էջ 4):

1927-ին խորհրդահայ մամուլում ծավալվում է մեկ այլ բանավեճ, որի առիթը դառնում է Ս. Խանոյանի «Գրական խոհեր» հոդվածը: Դրանում արծարծվում էին խորհրդահայ գրականությանը և գրահրատարակչությանը վերաբերող խնդիրներ (տե՛ս «խորհրդային Հայաստան», թիվ 156, 8 հուլիսի): Բանավեճին մասնակցում են Ալազանը, Սևարը, Վշտունին, Մահարին, Արմենը: Սևարը, Մահարին, ապա նաև Արմենը փորձում են բանավեճը պահել սկզբունքային խնդիրների շրջանակում անաչառորեն վերլուծելով պրոլետգրականության ծախողումների և ամլության պատճառները, սակայն Ալազանի և Վշտունու ջանքերով կարևոր քննարկումը տեղափոխվում է պարզունակ արդա-

րացումների, անհիմն մեղադրանքների և անձնական վիրավորանքների հարթակ՝ վերաճելով անպտուղ գրախոսության (տե՛ս Ավագան. «Պրոլետարական գրականության դժվարությունները», «խորհրդային Հայաստան», թիվ 165, 20 հուլիսի և Վշտունի. «Պրոլետգրականության զարգացման պայմանները Հայաստանում», «խորհրդային Հայաստան», թիվ 175, 2 օգոստոսի):

Գրական երկու ուժերի միջև պայքարն ստանում է նոր թափ «Գրական դիրքերում» ամսագրի հրատարակությունից հետո (1-ին համարը լույս է տեսել 1927-ի օգոստոսին): Թվում էր, թե գրական պարբերականի հրատարակությունը պետք է ծառայեր գրական միջավայրում համերաշխության մթնոլորտի հաստատմանը, ստեղծագործական լարված հարաբերությունների թուլացմանը, գրական կյանքի առողջացմանն ու աշխուժացմանը, սակայն պրոլետգրողները դիրքերն ամրապնդելուց հետո ամսագիրը վերածում են Չարենցի և չարենցականների դեմ հարձակումների մի նոր մարտադաշտի: Ամսագրի 1927-ի չորս համարներում մեկը մյուսի հետևից տպագրվում են քննադատական հոդվածներ Չարենցի, Մահարու, Բակունցի, Նրանց գնահատող Սուրխաթյանի դեմ: Վանանդեցին հեղձում է Բակունցին կյանքից, քաղաքական պայքարից կտրվածության, քաղաքակրթությունից փախչելու և բնության տարերքում ապաստանելու համար (տե՛ս «Քննադատական ֆելիետոն Ակսել Բակունցի «Մթնածորի» մասին», ԳԴ, թիվ 1, օգոստոս, էջ 12-15): Մահարին «Բարդիներ»-ի կապակցությամբ «արժանանում է» Ավագանի «մանր-բուրժուական», «կուլակային-բուրժուական իդեոլոգիայի մոլենտիկ», «սեռային սխրագործությունների և կաբակային անքուն գիշերների սիրահար պոետ» որակումներին (տե՛ս ԳԴ, թիվ 1, օգոստոս, էջ 34): Մինչ այդ՝ 1927-ի հունիսի 18-ի ՀՊԳ միության կոմֆրակցիայի նիստում, երբ վտարվել էր միությունից՝ «Վերջալույս» անտիպ բանաստեղծությամբ «հակահեղափոխական իդեոլոգիայի գիրկը» ընկնելու համար: Խայթոցներն ու կամիթները շարունակվում են ամենատարբեր առիթներով: Վանանդեցին, օրինակ, «Ա. Տերտերյանի «Նկատողություններ մեր գյուղագիրների մասին» հոդվածի առթիվ...» հրապարակման մեջ նկատում է, որ «Ակսելը նոր հորիզոնների երգիչ է: Նա բնապաշտ է և հոռետես...», ում ստեղծագործություններում երևում է «հին գյուղի մահացման ողբը» (տե՛ս ԳԴ, թիվ 2, սեպտեմբեր, էջ 6-10):

Գրական այս անառողջ մթնոլորտում Չարենցը հանդես է գալիս

Բաքվի «Կոմունիստ» թերթի խմբագրությանն ուղղված ««Օբյեկտիվ քննադատության» մասին (Նամակ խմբագրության)» վերտառությամբ Նամակով՝ մի կողմից ներկայացնելով գրական կյանքում խմբակային պայքարի քայքայիչ ներգործությունը, մյուս կողմից իրավացիորեն հնչեցնելով օբյեկտիվ և անաչառ գրաքննադատության անհրաժեշտությունը: Նամակը տպագրվել է թերթի 1928-ի հունվարի 4-ի համարում (թիվ 3): Համարը չհաջողվեց գտնել: 1983-ին Երևանում հրատարակված Չարենցի «Անտիպ և չհավաքված երկեր» գրքում այս նամակը տեղ է գտել կրճատումներով (տե՛ս էջ 443): Այդ կրճատումների բովանդակության մասին մասնակիորեն տեղեկանում ենք Վշտունու պատասխան նամակից, որում կան Չարենցից հղումներ:

Իր նամակում Չարենցը քննադատում է «Գրական դիրքերում» ամսագրի շուրջ հավաքվածների (Ն. Դաբադյան, Ալազան, Ն. Չարյան, Գ. Վանանդեցի) «թայֆայական» մոտեցումը, որով նրանք «մարքսիստական օբյեկտիվ քննադատության» քողի ներքո պաշտպանում են ոչ թե գրականության, այլ իրենց նեղ-խմբակային շահերը՝ գրական միջավայրը տրոհելով յուրային և թշնամի գրողների միջև: «Հավաքվել են երեք-չորս «լավ տղերք», - դժգոհում է Չարենցը, - վերցրել ժուռնալն իրենց ձեռքը և հարայ են տալիս սրա, նրա վրա»: Անդրադառնում է «թայֆաբաշիներ» Դաբադյանի, Վանանդեցու քննադատական ուղղորդված հարձակումներին, նրանց կամայական և աչառու դիտարկումներին, որոնք ոչ մի կապ չունեն գրական ճշմարտության և օբյեկտիվ քննադատության հետ: Նրանք պրոլետարական գրականության դափնիները շնորհում էին իրենց համախոհ գրողներին, անտեսում նրանց անցյալի սայթաքումները՝ ուրանալով Չարենցի և չարենցականների գրական վաստակը և օգտագործելով խեղաթյուրման ու կեղծիքի հնարավոր բոլոր ձևերը: Չարենցն իր հանդեպ «ամենագեղիկ և սև հալածանքի» դրսևորում է համարում անցյալի սայթաքումները շեշտելու, դրանցով իր վաստակը սևացնելու պրոլետքննադատների, մասնավորապես Դաբադյանի և Վանանդեցու մոլեռանդ փորձերը: «Ինչո՞ւ, - իրավացիորեն հարցնում է նա, - կարելի է օրական հազար անգամ մատի փաթաթան դարձնել իմ «Կապուտաչյա հայրենիք» պոեմը՝ գրված 1915 թվին, և ոչ մի անգամ չհիշել Ազատ Վշտունու նույն թվականին գրած «Կամավորի հուշատետրից» պատմվածքների ժողովածուն (Բաքու, 1915 թ. արտատպված դաշնակցական «Արևից»)...

Մի՞թե սոցիալ-քաղաքական անցյալը նշանակություն ունի մի-

միայն որոշ մարդկանց նկատմամբ, իսկ մյուսների համար՝ ոչ: Ինչու մեկի նկատմամբ թույն, քե՛ն ու լորձունք, իսկ մյուսների նկատմամբ թայֆայական ներողամտություն, չնայած, որ անհամեմատ ավելի մաքուր է այս մեկի գրական անցյալը և անհամեմատ ավելի անաղարտ՝ քաղաքական անցյալը»: Չարենցն իր արդարացի վրդովմունքն է արտահայտում 1927-ին «Գրական դիրքերում» ամսագրում տեղ գտած Դաբալյանի «Հեղափոխության պրոբլեմը մեր Նորագույն գրականության մեջ» (թիվ 3-4, հոկտեմբեր-նոյեմբեր, էջ 35-45) և Վանանդեցու ««Ազգային խանձարուրի» և պրոլետարական դրոշակի միջև (Ընկ. Սուրխաթյանի գրական հոդվածների առթիվ)» (թիվ 5, դեկտեմբեր, էջ 65-74) հոդվածների կապակցությամբ: Առաջինում, քննության ենթարկելով հեղափոխության գեղարվեստական անդրադարձները Նորագույն շրջանի հայ գրականության մեջ, Դաբալյանը Չարենցին անվանում է «մանր-բուրժուազիայի հետ կապված հեղափոխական ինտելիգենցիայի արտահայտիչը», ով չի հասկանում «հեղափոխության շարժիչ ուժերն ու հեռանկարները» և չի խորանում հեղափոխական երևույթների պատճառահետևանքային բովանդակության մեջ՝ դրսևորելով «ազգայնական աշխարհազգացողության» հատկանիշներ («Ամենապոեմ»): Գաղափարական լույն սայթաքումների ծիրում են դիտարկվում գրողներից՝ Չորյանը («Գրադարանի աղջիկը»), Դեմիրճյանը («Քաջ Նազար»), Թոթովենցը, Մահարին, քննադատներից՝ Սուրխաթյանը: Գնահատանքի խոսքեր հնչում են միայն պրոլետգրողների հասցեին (Չարյան, Վշտունի, Ալազան, Արաքս, Աբով)՝ որպես «պրոլետարական կոլեկտիվիզմի» և «մարքսիստական աշխարհագացողության» գաղափարակիրների¹:

Դաբալյանից հետո չի մնում Նաև Վանանդեցին: ««Ազգային խան-

1. Ժամանակին Դաբալյանի «մեծահնչյուն» այս հոդվածի դեմ հանդես է եկել Սուրխաթյանը: «Ճիշտ քննադատելու...պրոբլեմը» հոդվածում նա ծանրակշիռ հիմնավորումներով ներկայացրել է Դաբալյանի պնդումների և ընդհանրապես «Գրական դիրքերում» ամսագրի խմբակային դիրքորոշման սնանկությունը թե՛ Չարենցի ստեղծագործության, թե՛ գրական լուրջ խնդիրների առարկայական և խորքային վերլուծության հարցերում: Ըստ Սուրխաթյանի՝ Դաբալյանը հետապնդում է նեղանձական, խմբակային շահեր և առաջնորդվում երկակի չափանիշներով՝ «աչքերը աչառորեն» փակելով յուրայինների գաղափարական սայթաքումների վրա և «ցուցամատը երկարելով միմիայն Չարենցի» ուղղությամբ: Զննադատական այսպիսի մեղանչումների արդյունքում Չարենցի պես մեծությունը ստորադասվում է մուրճական պարզունակ պրոլետգրողներին: Կողք կողքի դնելով Չարենցի և մուրճականների գործերը՝ Սուրխաթյանը փաստական օրինակներով մերկացնում է Դաբալյանի դիտարկումների չարամիտ ուղղորդվածությունը (տե՛ս «Պրոլետար», 1927, թիվ 51, 52, 16, 17 դեկտեմբերի):

ծարուրի» և պրոլետարական դրոշակի միջև...» հողվածում, թիրախավորելով Սուրխաթյանի գրական հայացքներն ու մոտեցումները, ակնհայտ թշնամական վերաբերմունք է դրսևորում Չարենցի հանդեպ՝ նրա ստեղծագործությունն անվանելով մանր-բուրժուական, «հեղափոխական ֆրագիդոգիայով ծածկված ազգային գրականություն» և հայտարարելով, որ նա «դեռ չի գտվել իր ազգային հակումներից... Հեղափոխության երգերը... բնավ չեն սպանել բանաստեղծի ազգասեր ոգին»¹:

Չարենցն անհանդուրժելի է համարում պրոլետարական օրգանը «թայֆայական պրոֆուկացիոն մարգանքների» ասպարեզ դարձնելու և «գրական խմբապետներով» պրոլետգրական շարժում ղեկավարելու ամբարտավան փորձերը:

Չարենցի դժգոհություններին պատասխան նամակով արձագանքում է Վշտունին (տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1928, թիվ 6, 8 հունվարի): Այս նամակը մասնակի կրճատումներով տեղ է գտել «Անտիպ և չհավաքված երկեր» գրքում (Էջ 685): Վշտունին անդրադառնում է Չարենցի այն դիտարկմանը, թե պրոլետքննադատները թայֆայական ներողամտություն են ցուցաբերում իրենց համախոհ Վշտունու «Կամավորի հուշատետրից» գրքույկի գաղափարական սայթաքումներին, մասնավորապես մի դրվագի, երբ հիսնապետի հուղարկավորության ժամանակ կամավորականները հնչեցնում են դաշնակցական երգից մի հատված («Վերքերով լի ջան ֆիդա եմ»): «Ըստ Ե. Չարենցի,- փորձում է արդարանալ Վշտունին,- դուրս է գալիս, որ այս չափածո գրվածքը իմ գրչին է պատկանում: Միանգամայն սխալ է: Ես նկարագրել եմ, որ խմբապետի թաղման ժամանակ կամավորները երգում էին դաշնակցական մի երգ, որը գոյություն ունի վաղը~ւց»: Հակադարձելով Չարենցին՝ Վշտունին նշում է, որ 1915-ին ինքը չի եղել ո՛չ մարքսիստ,

1. Չարենցից առաջ պրոլետգրողների խմբակային պայքարի այս «թեորետիկոսին» արձագանքել է Սուրխաթյանը: «Ամբարտավան սեմինարիզմը» հողվածում նա սուր քննադատության է ենթարկել Վանանդեցու և ընդհանրապես ՀԴԳԿ-ի առանձին անդամների (Վշտունի, Չարյան, Դաբադյան և ուրիշներ) վարդիմական պահվածքը, գրական բանավեճերն անձնական հաշվեհարդարի վերածելու նրանց սևեռում ջանքերը (տե՛ս «Դրոլետար», 1927, թիվ 63, 30 դեկտեմբերի): Սուրխաթյանն անընդունելի է համարել Վանանդեցու հողվածի ատելախանձ շունչը, նրա անսկզբունքայնությունն ու պատեհապաշտությունը, խմբակիցների թերությունները քողարկելու և Չարենցին, Բակունցին, Մահարուն միտումնավոր թիրախավորելու փորձերը: «Նայիրյան սեմինարիզմով տոգորված» Վանանդեցուն նա համարել է գեղարվեստական ճաշակից զուրկ, ով «մարքսիստական ֆրագեդիոգիայով» փորձում է թաքցնել քննադատական մտքի աղքատությունն ու խեղճությունը:

ո՛չ դաշնակցական, և կարևորը ոչ թե մինչև 1917-ը, այլ դրանից հետո գրված ստեղծագործություններն են: Միաժամանակ առիթը բաց չի թողնում մեկ անգամ ևս պիտակավորելու, քաղաքական մեղադրանքներ հնչեցնելու Չարենցի հասցեին՝ 1922-ին Մոսկվայում հրատարակված նրա երկհատորյակում նկատելով «և՛ շովինիզմի, և՛ ինդիվիդուալիզմի», անգամ «ցարիզմի» դրսևորումներ:

Բանավեճին միջամտում է Հայաստանի պրոլետգրողների միության կենտրոնական վարչությունը՝ «Առասպել և իրականություն...» վերտառությամբ բաց նամակ հղելով «խորհրդային Հայաստան»-ի խմբագրությանը և համառ հետևողականությամբ շարունակելով պրոլետգրողների հովանավորչությունը (տե՛ս «խորհրդային Հայաստան», 1928, թիվ 7, 10 հունվարի): Նամակում չկա խորքային վերլուծություն, օբյեկտիվորեն չեն ներկայացվում փաստերն ու հանգամանքները, այք են զարնում կանխակալ հայացքն ու վերաբերմունքը: Ավելին՝ «բացառապես սկզբունքային հարցերի վրա» ուշադրություն հրավիրելու խոստման փոխարեն՝ նամակում քննադատության սլաքը միակողմանիորեն ուղղվում է Սուրխաթյանի և Չարենցի դեմ: «...Պարզ է,- հայտարարվում է նամակում,- որ ընկեր Սուրխաթյանի և համախոհների (Աղասի Վարդանյան), ինչպես նաև ընկեր Ե. Չարենցի կողմից վերջերս սկսված պայքարի կամպանիան մեր դեմ հետապնդում է միայն մի նպատակով՝ վարկաբեկել Հայաստանի Պրոլետարական Գրողների կազմակերպությունը և տապալել նրա ներկա ղեկավարությունը»: Գտնվում է նաև պատճառը. «Եվ այդ պայքարը տարվում է նրա համար, որպեսզի մեր «ծախության» վարագույրի հետևում, թագնավի ընկեր Սուրխաթյանի վարոնսկիական դեմքը և նրա դրոշակակիրների (Աղասի Վարդանյան, Եղիշե Չարենց) փառատենչ անհատապաշտությունը»: Ավարտն առավել քան պաթետիկ ու խրոխտ է. «Սակայն մենք չենք «ահաբեկվում», որովհետև մեզ ղեկավարում է Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, խրախուսում և ոգևորում է մեզ մեր աշխատանքների ընթացքում»:

Չարենցն ստիպված է լինում «Հարկադրված պատասխան»-ով մեկ անգամ ևս հերքել իր դեմ ուղղված մեղադրանքներն ու չարախոսությունները: Անդրադառնալով իր բերած փաստերի կապակցությամբ Վշտունու հնչեցրած «մանկական» արդարացումներին՝ նկատում է, որ նրա հերոսը հենց իր՝ հեղինակի մտքերի և զգայությունների արտահայտիչն է, նրա վերաբերմունքի ու մոտեցումների կրողը (տե՛ս

«Պրոլետար», 1928, թիվ 10, 13 հունվարի, թվագրված է՝ «Թիֆլիս, 1928 հունվ. 10-ին»): «Հարկավոր է լինել բարեխիղճ և տղայական փորձեր չանել հետին թվով արդարացում գտնել բաների, որոնք չունեն և չեն կարող ունենալ ոչ մի արդարացում», - հայտարարում է Չարենցը և վկայակոչում նոր փաստեր Վշտունու «ազգայնական գործունեությունից» (հեղափոխությունից հետո՝ 1919-ին, Թիֆլիսում հրատարակվող որբական «Փարոս» թերթի «հոգևոր առաջնորդ» լինելը, որբերին ուղղած ոգևորիչ նամակում ազգայնական ուղղվածության այս թերթը որբերի «արյունոտած, բայց կենսունակ հոգու ավետարան» անվանելը): Չարենցի պահանջը մեկն է. հրաժարվել «100 տոկոսային պրոլետգործեր իրենց հռչակելու» մեծամտությունից և Հայաստանի պրոլետգործերի ուժերի գաղափարական առաջնորդ իրենց կոչելու մենաշնորհից: «Իսկ ինչ վերաբերում է 1922 թվին Մոսկվայում հրատարակված իմ հատորներին, - եզրափակում է Չարենցը, - նրանցում, իհարկե, կան հայրենասիրական ռոմանտիզմի նմուշներ, բայց դրանք անմեղ բաներ են համեմատած Վշտունու զոլոդգիական, դաշնակցական ագրեսիվ նացիոնալիզմի հետ («Կամավորի Հուշատետրից» և այլն):»:

Ահա Չարենցի հենց այս նամակին է օրեր անց հաջորդում ուսումնասիրողների աչքից վրիպած հետևյալ նամակը. «Սրանով հայտնում եմ, որ ընկ. Ազատ Վշտունուն «Պրոլետար»-ի N 10-ում տված իմ պատասխան նամակի մի շարք խիստ արտահայտությունները հետևանք են եղել մեր միջև եղած պոլեմիքայի սուր բնույթի: Առանձնապես անհրաժեշտ եմ համարում շեշտել, որ այդ պատասխանը գրելիս ինձ հայտնի չեն եղել ընկ. Վշտունու նույն թվականին կատարած մի շարք դրական աշխատանքները որբանոցում, որի հետևանքով իմ պատասխանում բերված փաստերի գնահատականը կրել է միակողմանի բացասական բնույթ:

Ե. ՉԱՐԵՆՑ

1928, 27 հունվարի

Երևան

Խնդրում եմ «Պրոլետար»-ին արտատպել»:

Չարենցն այս նամակով ուղղակիորեն արձագանքում է 1928-ի հունվարի 19-24-ը Թիֆլիսում կայացած պրոլետգործերի անդրկովկասյան առաջին համագումարի ընդունած բանաձևի պահանջներին¹: Բանաձևը հրապարակվել է «Խորհրդային Հայաստան» թերթի

1. Անդրկովկասյան պրոլետգործերի ուժերը միավորելու գաղափարը հնչել է

հունվարի 28-ի համարում (թիվ 23)՝ նույն այն համարում, որում տեղ է գտել Նաև Չարենցի խնդրո առարկա նամակը: Թվագրված է՝ «19-և հունվարի 1928 թ. Թիֆլիս»: «Հայ պրոլետգրողների տարածայնությունները վերացած» վերտառությամբ այս փաստաթուղթն ուղղված էր խմբակայնության, անհանդուրժողականության, կոմսնապարծության դրսևորումների դեմ և միտված վերացնելու հայ պրոլետգրողների միջև խորացող տարածայնությունները՝ հանուն պրոլետգրական բոլոր ուժերի «սկզբունքային միասնականության»: Բանաձևի 3-րդ և 4-րդ կետերում մասնավորապես արձանագրվում է. «Հայաստանի Պ. Գ. Միության վարչությունը գտնում է, որ իր քննադատական աշխատանքի բնագավառում եղել են խմբակային մոտեցման մոմենտներ: Այսպես, օրինակ, անպայման սխալ է եղել ՀՊԳՄ և մի շարք ընկերների միջև եղած բանավեճերում ՀՊԳՄ Կենտրոնական օրգանում («Գրական Դիրքերում») ընկ. Չարենցի ստեղծագործությունը համարել «ազգային»: Նույնը պիտի ասել և Ա. Բակունցի ստեղծագործության մասին: ՀՊԳՄ անհրաժեշտ է համարում հայտնել, որ ընկ. Սուրխաթյանի դեմ ուղղված իր պատասխանի մեջ, միանգամայն սխալ կերպով ընկերներ՝ Աղասի Վարդանյանը և Ե. Չարենցը համարվել են վարոսակիականության դրոշակակիրներ: ՀՊԳՄ Վարչությունը կատեգորիկ կերպով հայտարարում է, որ ընկերներ Աղասի Վարդանյանը և Եղիշե Չարենցը ոչինչ ընդհանուր բան չունեն և չեն ունեցել վարոսակիականության հետ: ՀՊԳՄ Վարչությունը նույնպես կատեգորիկ կերպով հայտարարում է, որ ինքն ընկ. Չարենցին, նրա «Երկիր Նայիրի» գրվածքից հետո համարում է անպայման պրոլետարական գրող և որ նրա ստեղծագործության դեմ ուղղված առանձին հարձակումները... եղել են պոլեմիքա-

դեռևս 1927-ի հոկտեմբերի 30-ին՝ Վրաստանի պրոլետգրողների ասոցիացիայի հայկական սեկցիայի հավաքություն, որի ընթացքում Չարենցը զեկուցում է կարդացել՝ «Գրականության և գրական կազմակերպությունների դրությունը Հայաստանում» թեմայով: Գրական աշխատանքի «թափը» գնահատել է «ընդհանրապես թույլ», գրական ուժերի վիճակը՝ «ջլատված», քննադատությունը՝ «թույլ»: Մատնանշել է Նաև պրոլետգրողների հայաստանյան միության ղեկավարության սխալները, վկայակոչել իր պնդումները հաստատող փաստեր «Գրական դիրքերում» ամսագրից: Ծավալված մտքերի փոխանակությունից հետո Չարենցի զեկուցման հիմքով ընդունվել է բանաձև, որով Վրաստանի պրոլետգրողների ասոցիացիայի հայկական սեկցիան անհրաժեշտ է գտել «շուտափույթ կազմակերպել Անդրկովկասյան գրողների ֆեդերացիա, որը կընդգրկի իր մեջ բոլոր գրական հոսանքներն ու կոմեդիացնի նրանց աշխատանքները» (տե՛ս բանվոր թղթակից Մարտինի «Պրոլետասոցիացիայում» վերտառությամբ հաղորդումը «Պրոլետար»-ի 1927-ի նոյեմբերի 3-ի համարում):

կան պրիյումներ... Ընկ. Չարենցը, համաձայն վերը ասվածին, նույնպես ետ է վերցնում պոլեմիկայի ընթացքում իր կողմից գործադրած ավելորդ խստությունները»:

Բանաձևն ստորագրել են ՎԱՊԴ-ի քարտուղար Լ. Ավերբախը, ՎՊԳԱ-ի քարտուղար Բ. Բուաչիձեն, ՀՊԳՄ-ի կողմից՝ Ալազանը, Ան. Վարդանյանը, Վանասնդեցին, ՎՊԳԱ-ի հայկական սեկցիայի կողմից՝ Աղ. Վարդանյանը, Մարտինը, Չարենցը: Վերջինս այս համագումարում ընդգրկված էր պրոլետգրողների անդրկովկասյան ասոցիացիայի կազմում և ընտրված որպես պրոլետարական գրողների համամիութենական համագումարի պատգամավոր:

Չարենցի նամակը, ինչպես ձևակերպված է բանաձևում, «ավելորդ խստությունները» մեղմելու նպատակ էր հետապնդում, մինչդեռ ՀՊԳԱ-ի ներկայացուցիչները, ստորագրելով հանդերձ բանաձևը, կարճ ժամանակ անց «Գրական դիրքերում»-ի նոր համարներում վերսկսում են իրենց հարձակումներն առավել կատաղի թափով: Այդ մասին է վկայում նաև Բակունցը՝ «Կոմունիստ» թերթի աշխատակցի հետ զրույցում նկատելով. «Կուսակցության կողմից հաստատված բանաձևի դեմ նրանք չհամարձակվելով աշկարա դուրս գալ, դիմում են զարտուղի ճանապարհների, աշխատելով արհեստական խմբավորումներ ստեղծել միության ներսում, օգտագործելով «Գրական Դիրքերում» ժուրնալը, որը որպես օրգան պիտի ստեղծագործական համախմբման հրավիրեր միության մեջ մտնող բոլոր գրողներին, և գրականության ասպարեզում աստիճանաբար հեգեմոնիան իր ձեռքն առնել՝ գործակցության հրավիրելով և ուղեկիցների այն մասին, որը զույգ ոտքով և շատ ամուր կանգնած է կուսակցության կողմից տված պլատֆորմայի վրա:

Սպասվածը չկատարվեց: «Գրական Դիրքերում»-ի մինչ այժմ հրատարակած ինը տետրակները չեղան այն շղթան, որով պիտի կապվեին միության բոլոր անդամները: Կարծես թե լիովին չիրագործվեցին այն ջանքերը, որ համագումարի կողմից թափվել էին տարվա սկզբին՝ խաղաղ և ընկերական մթնոլորտ ստեղծելու համար» (տե՛ս «Գրական կյանքը Երևանում» հաղորդումը, «Կոմունիստ», 1928, թիվ 240, 14 հոկտեմբերի):

Պրոլետգրողների կողմից «անձնական խճճանքի» վերածված բանակռիվը տասնամյակի վերջին տեղափոխվում է քաղաքական-գաղափարախոսական պայքարի հարթություն, գրականությունը և

քննադատական միտքը թևակոխում են բոլշևիկացման փուլ, իսկ գրական-ստեղծագործական խնդիրները՝ փոխարինվում բանվոր-հարվածայիններին պրոլետգրականության մեջ ներգրավելու դատարկ կոչերով ու պահանջներով: Գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին ՀամԿ(Բ)Կ ԿԿ 1932-ի ապրիլի 23-ի պատմական որոշումը հաստատում է կուսակցական միակենտրոն վերահսկողություն գրական կյանքի բոլոր ոլորտներում: Գրականության քաղաքականացումը հանգեցնում է Չարենցի և չարենցականների դեմ կազմակերպված նոր հալածանքների, ապա՝ արյունոտ հաշվեհարդարների:

Չարենցն ու չարենցականները դուրս են մղվում գրական ասպարեզից, և պրոլետասոցիալականները դառնում են այս նոր քաղաքականության առաջամարտիկները, որոնք, շեղելով գրականությունը բնականոն զարգացման հունից, իրենց պրոլետարական և աշուղական ցածրորակ գործերով ուղղորդում են այն դեպի ապագայի և հակագրական որոնումների ընթացք:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԳՐԵՐ

1. Ալազան Վ., Հուշեր, Երևան, Հայաստան, 1967, 374 էջ:
2. Գրական վավերագրեր (1920-1930-ական թվականներ), հատոր 1, Երևան, Տիգրան Մեծ, 2020, 826 էջ, կազմ.՝ Ռ. Արիստակեսյան:
3. Եղիշե Չարենց, Անտիպ և չհավաքված երկեր, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1983, 712 էջ, կազմ.՝ Անահիտ Չարենց:
4. Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին (Չարենցի հետ), Երևան, Հայպետհրատ, 1961, 391 էջ :
5. Նորենց Վ., Հուշեր և արձագանքներ, Երևան, Հայաստան, 1968, 400 էջ:

ՄԱՍՈՒԼ

6. Ալազան Վ., Գ. Մահարի - «Բարդիներ»..., Գրական դիրքերում, Երևան, 1927, թիվ 1, օգոստոս, էջ 34:
7. Ալազան Վ., Պրոլետարական գրականության դժվարությունները, Խորհրդային Հայաստան, Երևան, 1927, թիվ 165, 20 հուլիսի:
8. Գրական կյանքը Երևանում, Կոմունիստ, Բաքու, 1928, թիվ 240, 14 հոկտեմբերի:
9. Դաբադյան Ն., Հեղափոխության պրոբլեմը մեր նորագույն գրականության մեջ, Գրական դիրքերում, Երևան, 1927, թիվ 3-4, հոկտեմբեր-նոյեմբեր, էջ 35-45:

10. Երզնկյան Ս., Չարենցի, թե գրական ռեակցիայի հետ, Կոմունիստ, Բաքու, 1925, թիվ 47, 1 մարտի:
11. Խանոյան Ս., Գրական խոհեր, Խորհրդային Հայաստան, Երևան, 1927, թիվ 156, 8 հուլիսի:
12. Խորհրդային Հայաստանի պրոլետարական գրողների միության կենտրոնական վարչություն, Առասպել և իրականություն (Բաց Նամակ «Խորհրդային Հայաստանի»-ի խմբագրության), Խորհրդային Հայաստան, Երևան, 1928, թիվ 7, 10 հունվարի:
13. Հայ պրոլետգրողների տարածայնությունները վերացած, Խորհրդային Հայաստան, Երևան, 1928, թիվ 23, 28 հունվարի:
14. Մահարի Գ., Երկու պրոլետ-գրողական միությունների միությունը, Կարմիր մոծակ, Երևան, 1927, թիվ 1, հունվար:
15. Մարտին, Պրոլետ-ասսոցիացիայում, Պրոլետար, Թիֆլիս, 1927, թիվ 16, 3 նոյեմբերի:
16. Չարենց Ե., Հարկադրված պատասխան, Պրոլետար, Թիֆլիս, 1928, թիվ 10, 13 հունվարի:
17. Չարենց Ե., Նամակ խմբագրության, Խորհրդային Հայաստան, Երևան, 1928, թիվ 23, 28 հունվարի:
18. Չարենց Ե., «Օբյեկտիվ քննադատության» մասին (Նամակ խմբագրության), Կոմունիստ, Բաքու, 1928, թիվ 3, 4 հունվարի:
19. Սուրխաթյան Հ., Ամբարտավան սեմինարիզմը, Պրոլետար, Թիֆլիս, 1927, թիվ 63, 30 դեկտեմբերի:
20. Վանանդեցի Գ., «Ազգային խանձարուրի» և պրոլետարական դրոշակի միջև (Ընկ. Սուրխաթյանի գրական հոդվածների առթիվ), Գրական դիրքերում, Երևան, 1927, թիվ 5, դեկտեմբեր, էջ 65-74:
21. Վանանդեցի Գ., Ա. Տերտերյանի «Նկատողություններ մեր գյուղագիրների մասին» հոդվածի առթիվ (Հ. Խ. Ս. Հ. Պետ. Համալսարանի գիտական տեղեկագիր N 2-3, էջ 258), Գրական դիրքերում, Երևան, 1927, թիվ 2, սեպտեմբեր, էջ 6-10:
22. Վանանդեցի Գ., Քննադատական ֆելիետոն Ակսել Բակունցի «Մթնածորի» մասին, Գրական դիրքերում, Երևան, 1927, թիվ 1, օգոստոս, էջ 12-15:
23. Պրոլետգրողների միության մեջ, Խորհրդային Հայաստան, Երևան, 1923, թիվ 15, 24 հունվարի:
24. Վշտունի Ա., Հեղափոխության երգիչը բուրժուական հոգեբանությամբ - «Ռոմանս անսեր» եղիչը Չարենցի, Մոսկվա - 1922 թ., Մուրճ, Երևան, 1923, թիվ 3, հունվար, էջ 21-23:
25. Վշտունի Ա., Նամակ խմբագրության, Խորհրդային Հայաստան, Երևան, 1928, թիվ 6, 8 հունվարի:

26. Վշտունի Ա., «Պոլեզոգություն» Եղիշե Չարենցի, Մոսկվա - 1922, Մուկոճ, Երևան, 1923, թիվ 3, հունվար, էջ 23-24:

27. Վշտունի Ա., Պրոլետգրականության զարգացման պայմանները Հայաստանում, Խորհրդային Հայաստան, Երևան, 1927, թիվ 175, 2 օգոստոսի:

REFERENCES

BOOKS

1. **Alazan V.**, Husher/ Memories, Yerevan, Hayastan hrat., 1967, 374 p.
2. Grakan vaveragr/Literary Documents (1920s-1930s), Volum 1, Yerevan, Tigran Mets, 2020, 826 p.
3. Yeghishe Charents, Antip yev chehavakvats yerker/Unpublished and ungathered works, Yerevan, AS hrat., 1983, 712 p.
4. Hishoghutyunner Yeghishe Charenti masin (Charentsi het)/Memories about Yeghishe Charents (with Charents), Yerevan, Haypethrat, 1961, 391 p.
5. **Norents V.**, Husher ev ardzagankner/Memories and responses, Yerevan, Hayastan hrat., 1968, 400 p.

PRESS

6. Alazan V., G. Mahari G. - «Bardiner».../ Mahary G. - Poplars..., Grakan dirkerum, Yerevan, 1927, issue 1, August, p. 34.
7. Alazan V., Proletarakan grakanutyan dzhvarutunnere/ The difficulties of proletarian literature, Khorhrdain Hayastan, Yerevan, 1927, issue 165, July 20.
8. Grakan Kyanke Yerevanum/Literary life in Yerevan, Communist, Baku, 1928, issue 240, October 14.
9. Dabaghyan N., Heghapokhutyan probleme mer noraguyn grakanutyan mech/The problem of Revolution in our newest literature, Grakan dirkerum, Yerevan, 1927, issue 3-4, October-November, էջ 35-45.
10. Yernkanyan S., Charentsi te grakan reakciayi het/With Charents or with literary reactionarizm, Communist, Baku, 1925, issue 47, March 1.
11. Khanoyan S., Grakan khoher/Literary Thoughts, Khorhrdain Hayastan, Yerevan, 1927, issue 156, July 8.
12. Khorhrdain Hayastani proletarakan groghneri miutyan ktronakan vachutyun/ Central Office of Soviet Armenia proletarian writers' Union, Araspel yev irakanutyun (Bac namak «Khorhrdain Hayastan»-i khembagrutyun)/ Myth and Reality (An open letter to the editors of "Soviet Armenia"), Khorhrdain Hayastan, Yerevan, 1928, issue 7, January 10.
13. Hay proletgroghneri taradzaynutunnere veratsats/Armenian proletarian writers' disagreements have been eliminated, Khorhrdain Hayastan, Yerevan, 1928, issue 23, January 28.

14. Mahari G., Erku prolet-groghakan miutyunneri miutyune/ Union of two proletarian writers' unions, Karmir Motcak, Yerevan, 1927, issue 1, January, p. 4.
15. Martin, Prolet-associaciayum/In the Proletarian Association, Proletar, Tiflis, 1927, issue 16, November 3.
16. Charents Yeghishe, Harkadrats pataskhan/ Forced answer, Proletar, 1928, issue 10, January 13.
17. Charents Yeghishe, Namak khembagrutyan/A letter to the editorial office, Khorhrdain Hayastan, Yerevan, 1928, issue 23, January 28.
18. Charents Yeghishe, «Obyektiv kennadatutyan» masin (Namak khembagrutyan)/ About «Objective Criticism» (A letter to the editorial office), Communist, 1928, issue 3, January 4.
19. Surkhatyan H., Ambartavan seminarizme/The Lofty Seminarizm, Proletar, Tiflis, 1927, issue 63, 30 December.
20. Vanandetsi G., «Azgayin Khandzaruri» yev proletarakan droshaki migeve (Enk. Surkhatyani grakan hodvatsneri masin)/Between «National Swaddlings» and Proletarian Flag (In connection with com. Surkhatyans literary articles, Grakan dirkerum, Yerevan, 1927, issue 5, December, p. 65-74:
21. Vanandetsi G., A. Terteryan «Nkatoghutyunner mer gyughagimeri masin» hodvatsi ativ(H. KH. S. H. Pet. Hamalsarani gitakan teghekagir N 2-3, edg 258)/ In connection with A. Terteryan's article of «Reviews about our Village-writers» (Scientific reference book of State University of S. R. S. A.), Grakan dirkerum, Yerevan, 1927, issue 2, September, p. 6-10:
22. Vanandetsi G., Kennadatatakan felieton Aksel Bakuntsi «Mtnadzori» masin/ Critical feuilleton about «Darkcanyon» of Aksel Bakunts, Grakan dirkerum, Yerevan, 1927, issue 1, August, p. 12-15:
23. Rroletgroghneri miutyan meg/ In the Proletarian writers' union, Khorhrdain Hayastan, Yerevan, 1923, issue 15, January 24.
24. Vshtuni A., Heghapokhutyan ergiche burzhuakan hogebanutyamb – «Romans anser» Yeghishe Charentsi, Moskva – 1922 t./Bourgeois Writer with bourgeois psychology –«Loveless Romance» of Yeghishe Charentsi, Moscow – 1922, Murch,Yerevan, 1923, issue 3, January, p. 21-23:
25. Vshtuni A., Namak khembagrutyan/ A letter to the editorial office, Khorhrdain Hayastan, Yerevan, 1928, issue 6, January 8.
26. Vshtuni A., «Poezozuma» Yeghishe Charentsi, Moskva – 1922/, «Poezozuma» of Yeghishe Charents, Moscow – 1922, Murch, Yerevan, 1923, issue 3, January, p. 23-24.
27. Vshtuni A., Proletgrakanutyan zargacman paymannere Hayastanum/ The conditions of development of proletarian literary in Armenia, Khorhrdain Hayastan, Yerevan, 1927, issue 175, August 2.

Ռուզաննա Արիստակեսյան – բանասիրական գիտությունների դոկտոր, ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, գիտական հետաքրքրությունները՝ 20-րդ դարի հայ գրականություն, սփյուռքահայ գրականություն, բնագրագիտություն: Հեղինակ է 2 գրքի, 60-ից ավել հոդվածների: Էլ. հասցե՝ Aristakesyanr@yahoo.com:

Ruzanna Aristakesyan – Doctor of Philology, Institute of Literature after M. Abeghyan NAS RA, scientific interests: history of Armenian literature of the 20th century, Armenian literature of Diaspora, textology. Author of 2 books and more than 60 scientific articles. Aristakesyanr@yahoo.com

Рузанна Аристакесян – доктор филологических наук, Институт литературы имени М. Абега́на НАН РА, научные интересы: история армянской литературы XX века, армянская литература диаспоры, текстология. Автор 2-х книг и более 60-ти статей. Aristakesyanr@yahoo.com